

ՄԱՏԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ 2022-2023

Տևողությունը 150 րոպե (2,5 ժամ)

1. 1 8 3 1 9 թվանշանների միջև դրեք երկու «+» և երկու «×» նշաններ այնպես, որ ստացված արտահայտության արժեքը լինի ամենամեծը (փակագծեր չդնե՛լ): Ո՞րն է այդ ամենամեծ թիվը:

- 1) 20 2) 34 3) 36 4) այլ պատասխան

2. $2023 - (2023 : * - 32) \cdot 23 = 22$ հավասարությունում գտնել աստղանիշով փոխարինված թվի թվանշանների գումարը:

- 1) 7 2) 8 3) 11 4) 19

3. ABCD քառանիշ թիվը այնպիսին է, որ $ABCD + ABC + AB + A = 8534$: Գտնել այդ քառանիշ թվի թվանշանների գումարը:

- 1) 14 2) 21 3) 23 4) 24

4. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի հարյուրավորի թվանշանը հավասար է այդ թվի մյուս երկու թվանշանների արտադրյալին:

- 1) 17 2) 21 3) 23 4) այլ պատասխան

5. Անին 2 և 3 թվանշաններով գրել է մի քանի թվեր, որոնց գումարը հավասար է 2023: Ամենաքիչը քանի՞ թիվ կարող է գրել Անին:

- 1) 7 2) 8 3) 9 4) այլ պատասխան

6. Արամը գրատախտակին գրեց մի քանի երկնիշ թվեր, իսկ Դավիթը 100-ից հանեց այդ թվերից յարաքանչյուրը և նույպես գրեց գրատախտակին: Արամի գրած թվերի գումարը հավասար է 576, իսկ Դավիթի ստացած թվերի գումարը 724: Քանի՞ թիվ է գրել Արամը գրատախտակին:

- 1) 11 2) 13 3) 17 4) 21

7. Լևոնը գումարեց ամսվա առաջին երկուշաբթին ընդգրկող շաբաթվա բոլոր օրերի ամսաթվերը: Նարեկը գումարեց այդ նույն ամսվա երրորդ երկուշաբթին ընդգրկող շաբաթվա բոլոր օրերի ամսաթվերը: Ինչքանո՞վ է Նարեկի ստացած թիվը մեծ Լևոնի ստացած թվից:

- 1) 49 2) 70 3) 98 4) այլ պատասխան

8. Քույրը 2 տարով փոքր է ավագ եղբորից և 3 տարով մեծ է միջնեկ եղբորից, իսկ միջնեկ եղբայրը 2 տարով մեծ է կրտսեր եղբորից: Նշվածներից ո՞րը կարող է լինել այդ չորս երեխաների տարիքների գումարը:

- 1) 42 2) 43 3) 44 4) 45


9. 3 խնձորը 7 սալորից ծանր է 30 գրամով, իսկ 2 խնձորը 5 սալորի չափ է կշռում: Քանի՞ գրամ է կշռում 1 խնձորը և 1 սալորը միասին:

- 1) 180 2) 190 3) 200 4) 210

10. Գտնել այն երկնիշ թվերի քանակը, որոնցից յարաքանցյուրը n ՝ 2-ի է բաժանվում, n չ էլ 3-ի:

- 1) 30 2) 33 3) 36 4) այլ պատասխան

11. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 թվերը տեղադրեք շրջանակների մեջ այնպես, որ եռանկյան յուրաքանչյուր կողմի գտնվող թվերի գումարը հավասար լինի 23-ի: Գտնել եռանկյան գագաթներում գրված թվերի արտադրյալը:



12. Գտնել 200-ից փոքր այն բնական թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրի բոլոր թվանշանները կենտ են:

13. Մանեն համարակալեց իր գրքույկի բոլոր էջերը՝ սկսած 1-ից և ավարտեց 20-ից մեծ երկնիշ համարով: Պարզվեց, որ նա 9 թվանշանը գրել է 2 անգամ քիչ՝ քան 7 թվանշանը: Քանի՞ թերթ ունի Մանեի գրքույկը:

14. Գտնել $1 \cdot 2 \cdot 3 \cdot 4 \cdot 5 \cdot \dots \cdot 14 \cdot 15 + (1 + 2 + 3 + 4 + 5 + \dots + 14 + 15)$ արտահայտության վերջին երեք թվանշաններով կազմված եռանիշ թիվը:

15. Զբոսաշրջիկը առաջին օրը ծախսեց իր ունեցած գումարի $\frac{1}{4}$ մասը և ևս 15 դոլար: Երկրորդ օրը նա ծախսեց մնացած գումարի $\frac{1}{3}$ մասը և ևս 20 դոլար: Իսկ երրորդ օրը երբ նա ծախսեց մնացած գումարի $\frac{1}{2}$ մասը և ևս 25 դոլար, իր մոտ մնաց 175 դոլար: Սկզբում քանի՞ դոլար ուներ զբոսաշրջիկը: